

կազմակերպում է գրական—երաժշտական մի երեկոյթ, Կոլտուրական այդ երեկոյթին գործնական մասնակցութիւն է ցոյց տալիս իր խմբով Սպիրիդոնը:

1911 թ. փետրար 11-ին Թիֆլիսի Պետական ժողովրդական տան տօնուած է գիւղացիների ճորտական ազատագրութեան 50-ամեայ պատմական տօնը: Այդ առիթով ուսական, ուկրաինական, վրացական երգեցիկ խմբերի հետ հրապարակ է գալիս և Սպ. Մելիքեանի խումբը և մեծ ընդունելութիւն գտնում: Նոյն թիւ ամսան Սպիրիդոնն անցնում է Դիլիջան, կազմում է մի խումբ և տալիս մի համերգ, որն արժանանում է հասարակութեան զնահատութեանը:

(Շարայտրեյի)

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

Մ Ա Յ Ր Դ Ի Ի Ա Ն

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿԱՅ. — Ի Ս. ՂԱԶԱՐ

(Շար. տես թագմ. 1925, էջ 890)

ՃԼԴ.

Սարգիս Արքեպիսկոպոս Կապադովկեցոյ նամակներու շարքին մէջ կայ 1746 Յունուար 1 թուակիր թուղթ մը առ Միսիթար, սկիզբը հետեւեալ ոտանաւորով.

Ամաւենոյդ | Բարձրագիտակ | Սրբաստեղուն
 Բարաքապէս | Ամատացեալ Յար | Անշարժուն
 Համեղ պո[ղ]օթ | Առատացեալ | Բախշան սիրուն
 Յարասարթ | Բախաբերուն | Գծր կատարուն.
 Կրօնիւ մաքուր | Ողղադաւան, և | Սրբասուն
 Ձիք քան զքեզ | Եռամեծար այր | Իմաստուն
 Ծառ որ կամիմ | Ես յետեցեալս | Սրտիւ բծուն
 Անհատ սիրով | Լիազունիւ ձօնել | զՈղջուն:

Փաւեմեցեալեան վերոյիշեալ նամակներն հրատարակած ատեն պէտք չէ տեսած այս վերջին թուղթն ի լոյս ընծայել, որովհետեւ Երնդեան և Նոր Տարւոյ ընդհաւորագիր մ'է ան, ինչպէս ինքն ալ բաւականացած է այս յիշատակութեամբ անցնել, զինչով լոկ ոտանաւորը: Սակայն, չենք գիտեր ինչո՞ւ, անոր երկու վերջին տողերը կը պակսին իր հրատարակութեան մէջ, ինչ որ սխալ հետեւանքի մը տարած է զինքը՝ երբ կ'ըսէ. « Առաջին երկու սիւններու զխազիրներն ընթացիկ՝ իսկ վերջին սիւնը վերէն վար կարդալով կ'ունենանք Արքայ Հայր կոչի Սարգսի՝ » . մենք ամբողջին հրատարակութեամբ կ'ունենանք այժմ որոշ իմաստ մը. « ԱՐԱՄ ԶԱՅՐ ԿՈՅԵՍԵԱՆ ՍԱՐԳՍԻՍ ... ՈՂՋՈՒՆ » (վերջին բառ երրորդ սիւն) :

(Շարունակել) Հ. Լ. Լ.

Հ. ՂԵՐՈՒՄ ՏԱՅԵԱՆ

1.— Գաւեթ, Կենտրոն. Սարգ. Արքեպո. Սարգ. էջ 207.